ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1436 24.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խմբի ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2014թ-ի մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ Խոշտանգումների և անմարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի պահանջը՝ *<<Սննդի առումով, պայմանավորվածություն էր ձեռք բերվել ոստիկանության հետ, որ ՁՊՎ-ում պահվող անձին պետք է ապահովեն օրեկան 3 անգամյա սնունդ, ներառյալ մեկ տաք սնունդ>>* չի պահպանվում: Այն էլ այն դեպքում, որ արդեն 2 անգամ բարձրացվել է ՁՊՎ-ում անվճար սննդով ապահովվելու սննդի գումարի չափը:

Խնդրում ենք Դիտորդական խմբին տեղեկացնել ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու սննդի համար նախատեսված գումարի վերահաշվարկը ինչ սկզբունքներով է իրականացվել և ինչ չափանիշներ են հաշվի առնվել:

Խնդրում ենք տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆ
ՄՏԻՑ № 3080
29 07 2014

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲ
ՄՏԻՑ № 5932
«29» 07 2014թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-1946 «13» 08 2014թ.

Ձեր՝ 24.07.2014թ. թիվ 2621/1436 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների, խմբի նախագահ

Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 24.07.2014թ. 2621/1436 գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և ֆինանսաբյուջետային վարչությունում:

ՀՀ ոստիկանությունը ղեկավարվում է ՀՀ կառավարության 05.06.2008թ թիվ 574-Ն որոշման պահանջներով և անշեղորեն կատարում է <<Խոշտանգումների և անմարդկային արժանապատվությունը նվաստացնող Եվրոպական կոմիտեի>> պահանջը: Հիշյալ որոշման համաձայն՝ ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց օրական երեք անգամ (նախաճաշ, ճաշ, ընթրիք) տրամադրվում է անվճար սնունդ (ներառյալ մեկ տաք սնունդ):

Եզակի դեպքերում խնդիրներ են առաջանում սահմանամերձ շրջանների ոստիկանության բաժինների ՁՊՎ-ներում՝ սնունդ մատակարարող ընկերությունների կողմից նման հնարավորություն չունենալու պատճառով, սակայն դրանք կարճ ժամանակում ստանում են իրենց դրական լուծումը:

Անվճար սննդով ապահովելու համար հաշվարկված գումարի չափի և դրա հաշվարկման հիմք են հանդիսացել մեկ անձին հասանելիք օրական սննդի ձեռք բերման համար ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ սահմանված չափաբաժինները, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա համար ձեռքբերվելիք սննդամթերքի պայմանագրային գները:

ՀՀ ոստիկանության շտաբ